

Բնականոն գնաճի հաշվարկը ՀՀ կենտրոնական բանկում

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակներից մեկը ՀՀ-ում գների կայունության ապահովումն է: Դրա հիմնավորումը բխում է դրամավարկային ժամանակակից տեսության այն դրույթից, որ գնաճն առավելապես մոնետար երևույթ է և երկարաժամկետում ամբողջությամբ կառավարվում է Կենտրոնական բանկի կողմից՝ իրականացվող դրամավարկային քաղաքականության միջոցով:

2006 թվականից ՀՀ ԿԲ-ն, ի թիվս աշխարհի մի քանի տասնյակ երկրների, անցում է կատարել գնաճի նպատակադրման ռազմավարությանը, որի ներքո առանձնահատուկ կարևորություն է տրվում գնաճային սպասումներին, քանի որ այս ռազմավարության հիմքում ընկած են ապագային միտված դատողությունները: Այլ կերպ ասած, ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունն ուղղված է առաջին հերթին միջնաժամկետ հատվածում գնաճային սպասումների խարսխմանը, որի արդյունքում արդեն երկարաժամկետ հատվածում ապահովվում է գների կայունության նպատակը: Այս շղթայում, որպես կանոն, վերջնական թիրախային ցուցանիշ է ընդհանուր գնաճը, կամ որ նույնն է, սպառողական գների ինդեքսի աճը, քանի որ այն լավագույնս արտացոլում է կենսաապահովման ծախսերի, վերջնական արտադրության ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր մակարդակի փոփոխության չափը, ինչպես նաև շուկայի մասնակիցների կողմից որոշումների կայացման և պայմանագրերի կնքման հիմնական ուղենիշն է: Այնուհանդերձ կարճաժամկետ հատվածում ընդհանուր գնաճի վրա ազդում են ոչ միայն համախառն պահանջարկի պարբերաշրջանային տատանումները, այլ նաև առանձին ապրանքների և ծառայությունների շուկաներում առաջարկի շուկայի (օրինակ՝ եղանակային պայմանների հետևանքով բերքի առատություն կամ կրճատում, որևէ ապրանքի նկատմամբ սպառողների նախասիրությունների փոփոխություն, պետության կողմից կարգավորվող գների բարձրացում կամ իջեցում և այլն) պատճառով առաջացած գների ժամանակավոր տատանումները:

Տեսականորեն դրամավարկային քաղաքականությունն առավելապես արձագանքում է ընդհանուր գնաճի վրա համախառն պահանջարկի ազդեցության գործոններին, մինչդեռ առաջարկի շուկայի դեպքում ԿԲ-ն ունի երկրնորանք: Ըստ էության, օպտիմալ քաղաքականությունը առաջարկի շուկային չարձագանքելն է, քանի որ, ինչպես վերը նշվել է, դրանք կրում են ժամանակավոր բնույթ և ժամանակի ընթացքում մարում են, ուստի դրանց ազդեցության չեզոքացումը կարող է ոչ ցանկալի տատանողականություն առաջացնել թե՛ ֆինանսական շուկաներում և թե՛ տնտեսության մյուս հատվածներում: Այսինքն, եթե դրսևորված առաջարկի շուկան էապես չեն ազդում գնաճային սպասումների վրա, ԿԲ-ն առնվազն դրանց առաջնային ազդեցություններին չի արձագանքում, այլ կարևորում է լայն հասարակության հետ հասկանալի ու հիմնավորված հաղորդակցումը՝ իր գործունեության հանդեպ ունեցած վստահության բարձր աստիճանը պահպանելու նկատառումով:

Սակայն գործնականում միշտ չէ, որ հստակ տարանջատվում են գնաճի վրա ազդող առաջարկի և պահանջարկի գործոնները: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում ունենալ գնաճի այնպիսի ցուցանիշներ, որոնք թույլ կտան հնարավորինս զտել առաջարկի գործոնների ժամանակավոր ազդեցությունները, ցույց տալով գների փոփոխության առավել կայուն՝ ամբողջական պահանջարկով պայմանավորված քաղադրիչը, որն առավել վստահելի ցուցանիշ է քաղաքականության ուղղորդման տեսանկյունից՝ հանգեցնելով վերջինիս արդյունավետության բարձրացմանը: Հենց այս նպատակով էլ հաշվարկվում են այսպես կոչված «բնականոն գնաճի» ցուցանիշները: Հարկ է նշել, որ գոյություն չունի բնականոն գնաճի հաշվարկման մեկ լավագույն եղանակ, ուստի ժամանակի ընթացքում ձևավորվել են տարբեր մեթոդաբանություններ (վիճակագրական, կառուցվածքային և այլն):

ՀՀ ԿԲ-ն բնականոն գնաճի հաշվարկման համար օգտվում է այսպես կոչված **«Սեզոնային տատանողական ապրանքների և վարչարարորեն կարգավորվող ծառայությունների արտաքսման»** մեթոդաբանությունից, որի դեպքում ընդհանուր զամբյուղից հանվում են միայն այն ապրանքախմբերը, որոնց գնաճը կարճաժամկետ հատվածում գրեթե ամբողջությամբ պայմանավորված է առաջարկի գործոններով¹: Ըստ այդմ, գների փոփոխության այն մասը, որը կրում է առավել համակարգային բնույթ և պայմանավորված է ամբողջական պահանջարկի գործոններով, միաժամանակ արտահայտվում է թե՛ զտված և առանձնացված ապրանքախմբերի, թե՛ բնականոն գնաճի ցուցանիշների մեջ և չի առաջացնում հարաբերական գների էական փոփոխություններ: Այս մեթոդի արդյունքում ստացված բնականոն գնաճի ցուցանիշը առանձնանում է նաև իր պարզությամբ և իր վրա ազդող գործոնների խմբավորման ու մեկնաբանման առավել հասկանալիությամբ, ինչը շատ կարևոր է դրամավարկային քաղաքականության հաղորդակցման տեսանկյունից: Հարկ է ընդգծել, որ հստակ առավելություններով հանդերձ, այս մեթոդաբանության կիրառման արդյունքում բնականոն գնաճի մեջ հնարավոր է պահպանվեն որոշակի առաջարկի գործոնների ազդեցություններ: Նմանատիպ դիսկերը բացառելու համար ՀՀ ԿԲ-ն վերը նկարագրված մեթոդով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշը նախկինում լրացուցիչ ֆիլտրել է «ճշգրտման» վիճակագրական մեթոդով: Մասնավորապես, բնականոն գնաճի զամբյուղի մեջ ներմուծված ապրանքների ցանկից հեռացվել են այն ապրանքները, որոնք տվյալ ամսվա ընթացքում դրսևորել են համապատասխան սահմանաչափից մեծ տատանողականություն՝ այն ենթադրությամբ, որ այդ տատանումները հիմնականում առաջարկի գործոնների ազդեցության արդյունք են: Սակայն այս մեթոդը խոցելի է այն իմաստով, որ կրում է զուտ մեխանիկական բնույթ և թույլ չի տալիս ուսումնասիրել կամ դատողություն անել գների փոփոխության բնույթի վերաբերյալ, ուստի առանձին դեպքերում կարող է սխալ ազդակներ հաղորդել գնաճի միտման և սպասվող վարքագծի

¹ Սեզոնային ապրանքների գների տատանողականության առավելապես առաջարկի գործոններով պայմանավորված լինելու դատողությունը հիմնված է նրա վրա, որ ՀՀ-ում սեզոնային գյուղմթերքի գների փոփոխության զգալի մասը, առնվազն կարճաժամկետ հատվածում, պայմանավորված է ոչ թե պահանջարկի, այլ գյուղատնտեսության ոլորտում թողարկման ծավալների փոփոխություններով և ընթացիկ զարգացումներով: Մյուս կողմից, չնայած վարչարարորեն կարգավորվող ծառայությունների գների փոփոխությունները երկարատև ժամանակահատվածի ընթացքում կրում են պահանջարկի գործոնների ազդեցությունները, այնուհանդերձ գների մեծ կոշտության և փոփոխությունների խիստ դիսկրետ բնույթի (որոշումների հիման վրա) պատճառով փոփոխության պահին հանդես են գալիս որպես առաջարկի գործոն:

վերաբերյալ: Օրինակ, եթե առկա է համաշխարհային տնտեսության պահանջարկի դրական ցիկլ, որի ներքո միջազգային ապրանքահումքային շուկաներում տեղի է ունենում գների նկատելի աճ, վիճակագրական ճշգրտման արդյունքում բնականոն գնաճի մեջ տվյալ ներմուծվող ապրանքների գների բարձր աճերը կարող են դիտարկվել որպես առաջարկի ժամանակավոր գործոնների ազդեցության հետևանք և զտվել: Մինչդեռ տվյալ դեպքում ցանկալի կլիներ այն թողնել բնականոն գնաճի հաշվարկում, քանի որ մյուս կողմից դա վկայում է դրական արտաքին պահանջարկի առկայության մասին: Նշված խնդրից խուսափելու համար ՀՀ ԿԲ-ն ներկայումս վիճակագրական զտման մեխանիկական մեթոդի փոխարեն առաջարկի մնացորդային շուկերի հայտնաբերումն իրականացնում է առանձին ապրանքի կամ ծառայության շուկայում գնագոյացման գործընթացի մանրակրկիտ տնտեսագիտական վերլուծության և մասնագիտական դատողությունների միջոցով, որն, ըստ էության, առավել նախընտրելի տարբերակ է: Դրամավարկային քաղաքականության ազդեցության տեսանկյունից առաջնայնությունը տրվում է հենց այս տարբերակին, որով հաշվարկված բնականոն գնաճի ցուցանիշը, նախկին տարբերակով հաշվարկվածին զուգահեռ, հրապարակվում է ԿԲ տարբեր պարբերականներում և հրապարակումներում:

Հարկ է նշել, որ ԿԲ-ն մշտապես զարգացնում և կատարելագործում է բնականոն գնաճի մեթոդաբանությունը՝ ուսումնասիրելով այլ՝ հատկապես մոդելային հիմքով մեթոդներ, ինչի պարագայում հնարավոր կդառնա տարբեր մեթոդների արդյունքները փոխադարձ ստուգելու և համադրելու միջոցով բարելավել արվող հիմնական դատողությունները և իրականացվող դրամավարկային քաղաքականությունը:

Վերոնշյալ երկու տարբերակով բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է ստորև:

1. «Սեզոնային տատանողական ապրանքների և վարչարարորեն կարգավորվող ծառայությունների արտաքսման» եղանակով բնականոն գնաճը հաշվարկելու համար ընդհանուր սպառողական զամբյուղից արտաքսվում են սեզոնային ապրանքները² և վարչարարորեն կարգավորվող ծառայությունները³, որից հետո զամբյուղի մյուս ապրանքների և ծառայությունների գնային փոփոխությունների հիման վրա հաշվարկվում է բնականոն գնաճի ցուցանիշը:

2. «Արտաքսման և ճշգրտման» եղանակով բնականոն գնաճի ցուցանիշը ՀՀ ԿԲ-ի կողմից հաշվարկվում է 2008թ-ից: Հաշվարկման նպատակով սպառողական զամբյուղը բաժանվում է 3 խմբի.

- Սեզոնային տատանողական ապրանքների և վարչարարորեն կարգավորվող ծառայությունների խումբ
- Ներմուծվող ապրանքների խումբ⁴
- Այլ ապրանքների ու ծառայությունների խումբ⁵:

² Սեզոնային ապրանքների խմբին են դասվում ՍԳԻ զամբյուղում ներառված «Միրգ», «Բանջարեղեն» և «Ձու» ապրանքախմբերը:

³ Երկու մեթոդների դեպքում էլ վարչարարորեն կարգավորվող ծառայությունների խմբում ներառվում են բնակարանային կոմունալ, կապի, տրանսպորտի կարգավորվող ծառայությունները:

⁴ Ներառվում են այն ապրանքները, որոնց ներմուծման ծավալները ավելի քան 50%-ով ավել են, քան տեղական արտադրության ծավալները և որոնցից յուրաքանչյուրի կշիռը սպառողական զամբյուղում կազմում է նվազագույնը 0.2%:

⁵ Բացի առաջին և երկրորդ խմբի ապրանքներից և ծառայություններից, մնացած բոլոր ապրանքներն ու ծառայությունները

Այս եղանակով բնականոն գնաճի հաշվարկման համար սպառողական զամբյուղից ամբողջությամբ արտաքսվում են առաջին խմբի ապրանքներն ու ծառայությունները, երրորդ խմբի ապրանքներն ու ծառայությունները նույնությամբ մասնակցում են հաշվարկին, իսկ երկրորդ խմբի (ներմուծվող ապրանքներ) ապրանքների համար կիրառվում է ծայրակետերի բացահատում⁶ և դրանց փոխարինում նախորդ 5 տարիների միջին ցուցանիշով:

Վերոնշյալ երկու մեթոդների դեպքում էլ հաշվարկներն իրականացվում են ՀՀ ՎԿ սպառողական գների ինդեքսի հաշվարկի մեթոդաբանությանը համապատասխան:

⁶ Ծայրակետերի բացահատման համար կիրառվում է ծայրահեղ ծայրակետերի բացահայտման Տուկեյի մեթոդը (Tukey's method for extreme outliers):